Թ Ռ Չ Ն Ի Կ

ՊԼԵՇՉԵՒԻՑ

Թարգ. Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

Ինչո՞ւ համար իմ հէգ թռչնիկ,
Թռչնիկ սիրուն և կայտառ,
Դու այդպէս վաղ թռար մեզ մօտ,
Հեռի օտար մեր աշխարհ։

Բոլոր երկինքն է ամպամած
Թուխպ է պատել արևին,
Եւ եղեգնը չոր ու գեղնած
Քամուց թեքւում է գետին։

Ահա՛ անձրևը. մի նայի՛ր տես—
Հեղեղի պէս է թափւում,
Տխուր է, ցուրտ, և կարծես թէ
Դեռ գարուն չէ մեզանում։

Ես չեմ եկել ո՛չ երկնքի,
Ո՛չ արևի համար վառ,
Չոր ու դեղնած եղեգնուտում
Բոյն չեմ շինի ինձ համար։

Խեղճ աղքատի կըտուրի տակ
Ես իմ բոյնը կը շինեմ,

Բարձրբեալը ինձ յըղել է
Որ նրան բերկրանք ներշնչեմ։

Երբ որ դաշտից իւր խրճիթը
Նա դառնալով վշտալի,
Կը պառկի չոր խոտի վրայ,
Ես երգս կերգեմ բերկրալի։

Այդ երգը նրան ես բերել եմ
Ծով-ցամաքից հեռաւոր,
Որը երբէք ես չեմ երգել
Մարդկանց համար բախտաւոր։

Ես շատ լուրեր կը հաղորդեմ
Մի այլ երկրից երջանիկ,
Ուր ոչ խեղճեր, ոչ ունևոր
Եւ ոչ վիշտ կայ, ո՛չ կարիք։

Այդ երգը նրա կուրծքը յոգնած
Հաշտութիւնով կը լեցնի,
Եւ լի յոյսով դէպի Աստուած
Խեղճ մշակը կը քնի։